

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԹԵՆՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՄՈՅ
ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ՄԵՐ ՀԱՄԱՏՔԻ ՀՕՐԻ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ
ՀԱՄԱՏՔՈՎ ԳՕՏԵՊԵՂՈՒԴԱԾ, ՊԱՏՐԱՍՏ ԸԼԼԱՆՔ
ԴԻՍԱՒՈՐԵԼՈՒ ԸՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍԸ

Յայտարարեց Առաջնորդ Սրբազան Հայրը

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Տօնացոյցին համաձայն, Մեծ Պահոց 34-րդ օրը յիշատակն է Ս. Գրիգոր Լուսաւորչի Խոր Վիրապ մուտքին: Աշխարհացրիւ հայոց զաւակները ամենուրեք խոր սիրով եւ յարգանքով կը յիշեն հայոց ազգի պաշտպան մեծ Սուրբն եւ Լուսաւորիչը հոգիներուն հայոց զաւակաց՝ Ս. Գրիգոր Պարթեւ Հայրապետին, որ որպէս Զրիստոսի հաւատարիմ զինուոր, շարականագրին բառերով՝ «Զրիստոսի չարչարանքներուն պակասութիւնը իր մարմին վրայ կրեց», եւ իր հաւատքին վկայութիւնը տուաւ «Կենդանի նահատակութեամբ», 13 տարի խոր վիրապի մթութեան ու խաւարին մէջ աղօթելով եւ երկնելով հայոց ապագայ լուսաւորութիւնը, Հայաստան աշխարհն ու հայ ժողովուրդը Արդարութեան Արեգակով պայծառակերպելու համար:

Այդ դէպքին նուիրուած տօնին առթիւ, հայ եկեղեցիներէ ներս աշխարհով մէկ Ս. Պատարագ կը մատուցուի, իսկ Ս. Գրիգոր Լուսաւորիչ անունով կնքուած եկեղեցիները մեծ տօնակատարութիւն կը կազմակերպեն, մատաղ կ'օրհնեն եւ սիրոյ սեղաններ կը բանան: Հոգեւոր ցնծութեան եւ ուխտի օր կ'ըլլայ մանաւանդ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար, ուր ծովածաւալ ուխտաւորներ կը փութան Մայրավանք, աղօթքներով մաքրուած իրենց շուրթները տարին գէթ մէկ անգամ դրոշմելու Ս. Գրիգոր Լուսաւորչի Ս. Աջին եւ սուրբերու մասունքներուն:

Կիրակի, 2 Ապրիլի առաւօտուն, հոգեւոր նոյն ապրումը եւ խանդավառութիւնը ապրեցան նաեւ Սան Ֆրանսիսքոյի ականդապահ հայու զաւակները, որ մեծ շուքով տօնախմբեցին ու յիշատակեցին իրենց եկեղեցւոյ անուանակոչութիւնը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի լոյս անունով լծուած:

Առաջնորդ Սրբազանը, Միաբան Հայրեր եւ Ազգային Վարչութեան անդամներ Շաբաթ օր արդէն Սան Ֆրանսիսքօ կը գտնուէին այս տօնական օրուան առիթով:

Շաբաթ երեկոյեան, Առաջնորդ Սրբազանը առաջին հերթին հանդիպում ունեցաւ եկեղեցւոյ Հովիւին, հոգաբարձական կազմին եւ երեսփոխաններուն հետ, լսեց անոնց մտահոգութիւնները, եւ խոստացաւ շատ մօտիկ ապագային պարտն ու պատշաճը տնօրինել՝ բաւարարելու եկեղեցւոյ եւ համայնքին հոգեւոր եւ կրօնա-դաստիարակչական ծրագիրներն ու կարիքները:

Կիրակի առաւօտուն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջափակը սկսած էին փութալ հաւատացեալներ: Օրուան յիշատակի Ս. Պատարագը մատոյց Թեմիս Առաջնորդ Սրբազան Հայրը, իսկ Ս. Սեղանին սպասարկեցին Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկեան:

«Հրաշափառ»ով Սրբազան Հայրը մուտք գործեց եկեղեցի, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն եւ արեւուշներուն: Քարոզէն առաջ, «Ուրախ Լեր» շարականին երգեցողութեամբ, աջակողմեան դասէն պաշտօնական թափօրով խորան բերուեցաւ Վեհափառ Հայրապետ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կոնդակը, զոր ընթերցեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որով Առաջնորդ Հօր խնդրանքին ընդառաջելով՝ *ծաղկեալ փիլոն* կրելու իրաւունք կը շնորհուէր եկեղեցւոյ եւ ծուխին Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Աւետիս Բիւյ. Թորոսեանին:

Առաջնորդ Սրբազանը իր քարոզէն առաջ նախ շնորհաւորեց Տէր Հայրը եւ հրաւիրեց զինք, որ նոր խանդով եւ ամբողջանուէր յանձնառութեամբ ծառայէ Սան Ֆրանսիսքոյի բանաւոր հօտին: Իր քարոզին մէջ, Սրբազանը վեր առաւ հոգիներու Լուսաւորիչ Հայրապետին սրբակենցաղ ու մաքրամաքուր կեանքը, Քրիստոսի եւ Աւետարանին Լոյսը Հայաստան աշխարհի եւ հայ ժողովուրդին տարածելու անյողողոյ հաւատքի քաջութիւնը, հրաւիրելով ներկաները ընդօրինակելու Ս. Գրիգոր Լուսաւորչի քրիստոսանուէր կեանքի օրինակը, քալելու անոր բացած հաւատքի, յոյսի եւ զոհաբերուող սիրոյ ուղիէն եւ Քրիստոսի մեծ Սուրբին ու Հայ Առաքելական Եկեղեցւոյ հիմնադիրին հաւատքովը եւ յոյսովը գօտեպնդուած՝ դիմաւորելու Քրիստոսի երկրորդ գալուստը, ուխտի այս օրէն իսկ սկսեալ ապրիլ մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի ներկայութիւնը:

Ս. Պատարագի աւարտին, կատարուեցաւ մատաղի օրհնութիւն, որմէ ետք ներկաները միաբերան երգեցին «Կիլիկիա», «Ի Վեհ Բարձանց» եւ «Մեր Հայրենիք» երգերն ու մաղթերգները:

Եկեղեցիէն ետք, «Խաչատուրեան» Հայ Կեդրոնի «Սարոյեան» սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Ճաշին ներկայ էին աւելի քան 200 հրաւիրեալներ: Կատարուեցաւ պատշաճ գեղարուեստական յայտագիր: Խօսք առին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը, հոգաբարձութեան ատենապետ՝ Տիար Ներսէս Դշոյեան, ինչպէս նաեւ Ազգային Վարչութեան ատենապետ՝ Տիար Հրայր Պալեան: Առաջնորդ Սրբազանը այս առիթով Ազգային Առաջնորդարանի անունով գնահատագիրեր յանձնեց քանի մը ամիսներ առաջ Վեհափառ Հայրապետին Սան Ֆրանսիսքօ հայ գաղութին տուած Հովուապետական այցելութեան առիթով ստեղծուած Ընդունելութեան Յանձնախումբի ժրաջան անդամներուն, որոնք ոչ մէկ ճիգ խնայած էին լաւագոյն ձեւով կազմակերպելու Վեհափառ Հօր օրհնաբեր այցելութիւնը:

Հուսկ բանքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ մեծապէս գնահատեց Ազգային Վարչութեան անդամները, որ գրեթէ լրիւ կազմով ներկայ էին թե՛ պատարագին եւ թե՛ ճաշկերոյթին, իրենց տիկիններով միասին: Ան նաեւ եկեղեցւոյ անուանակոչութեան նուիրուած ձեռնարկը գնահատեց, շնորհաւորեց եւ յաջողութիւն մաղթեց եկեղեցւոյ Հովիւին, հոգաբարձութեան եւ երեսփոխաններուն՝ իրենց հոգեւոր, կրօնական առաքելութեան եւ կազմակերպչական աշխատանքներուն համար: Սրբազան Հայրը այս առիթի յայտնեց, որ Աւագ Շաբթուան ընթացքին Սան Ֆրանսիսքոյի հայ համայնքն ու ծուխը պիտի վայելէ ներկայութիւնը Բերիոյ Թեմի նախկին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սուրբ Արք. Գաթարոյեանի, եւ կոչ ուղղեց բոլորին խումներամ եւ հաւատքով մասնակցելու Աւագ Շաբթուան

հոգեպարար սրբազան արարողություններուն: Առաջնորդ Սրբազանը գնահատեց նաեւ Տիար Յենրի Խաչատուրեանը, որ նորակառոյց Առաջնորդարանի բարեգարդման համար, ուխտի այս տօնին առթիւ, կը նուիրէր 25 հազար տոլար: Ապա Առաջնորդ Սրբազանը կարդաց Տիար Յենրի Խաչատուրեանի ուղղած Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը, որով Վեհափառը Տիար Յենրի Խաչատուրեանին եկեղեցոյ, ազգին եւ հայ վարժարանին տարիներու ընթացքին կատարած երախտարժան բազում նուիրատուութիւնները եւ իշխանական բարերարութիւնները բարձր գնահատելով, անոր կը շնորհէր «Կիլիկեան Իշխան»ի պատիւ եւ տիտղոս: Յիշեցնենք, որ Վեհափառ Հայրապետը իր այցելութեան օրերուն անձնապէս բարերարին կուրծքը զարդարած էր այս մետալով:

Այս առիթով սրտի խօսք արտասանեց նաեւ մեծարեալ Տիար Յենրի Խաչատուրեան, եւ շնորհակալութիւն յայտնեց իրեն տրուած այս պատիւին ու շնորհքին համար:

«Պահպանիչ»ով եւ «Կիլիկիա» երգեցողութեամբ, ներկաները գոհունակ սրտով մեկնեցան իրենց տուները, իրենց հետ տանելով Ս. Գրիգոր Լուսաւորչի վառ հաւատքը, յոյսը եւ օրուան հոգեւոր ապրումներն ու շէն ոգին:

Պ. Վ. Կ.

On the Name Day of St. Gregory Armenian Church of San Francisco

Reaffirmed by the faith of our Spiritual Father St. Gregory the Illuminator, let us be prepared for the second coming of Christ

Declares H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate

According to the calendar of the Armenian Apostolic Church, on the 34th day of Great Lent we commemorate the descent of St. Gregory the Illuminator into the Pit. Armenian faithful worldwide celebrate this feast with deep love and respect, remembering Christ's loyal soldier who for 13 years prayed in the depths of the Pit for the enlightenment of the Armenian nation and people.

On this occasion, special Holy Mass is conducted in all Armenian churches, with churches bearing the name of St. Gregory the Illuminator organizing celebrations and Blessing of the Offerings (*madagh*). It is particularly a day of spiritual joy for the Catholicosate of the Great House of Cilicia, where pilgrims flock to the Holy See of Cilicia to kiss the relic forearm of St. Gregory the Illuminator.

With this same enthusiasm, the faithful of San Francisco's St. Gregory Church celebrated the Feast of St. Gregory and the name day of their church. The Prelate, His Eminence Archbishop Moushegh Mardirossian was present along with members of clergy and Executive Council.

On Saturday evening, the Prelate and members of the Executive Council met with Parish Priest Rev. Avedis Torossian, and the Board of Trustees and Delegates to hear their concerns and to discuss future plans.

On Sunday morning, the Prelate conducted Holy Mass, joined by Very Rev. Fr. Muron Aznikian and Very Rev. Fr. Barthev Gulumian at the altar. The Prelate entered the church with the singing of "Hrashapar" and guided by H.M.E.M. scouts. Prior to the sermon, the hymn "Oorakh Ler" was sung as the Pontifical Encyclical was brought forth to the altar in a procession. The Encyclical, which was read by the Prelate, grants Rev. Torossian the privilege of wearing an ornament *pilon*. The Prelate congratulated the Pastor, after which he delivered his sermon. In his sermon, the Prelate spoke of St. Gregory's immaculate life and his devotion in spreading the light knowledge of God to the Armenian nation and people, thus calling on those present to take example from his life and reaffirmed by his faith to be prepared for the second coming of Christ, and to make a vow to live a God pleasing life from this day forward.

At the conclusion of Holy Mass, the Blessing of the Offerings took place, after which the parishioners joined the clergy members in singing "Cilicia", "Ee Veh Partsants", and "Mer Hayrenik".

Following church services, a reception took place at "Khatchadourian" Armenian Community Center "Saroyan" Hall, with more than 200 guests in attendance. Remarks were made by the host Pastor Rev. A. Torossian, Board of Trustees Chair Mr. Nerses Teshoian, and Executive Council Chair Mr. Hrair Balian. On this occasion, the Prelate handed certificates to Pontifical Visit Welcoming Committee members for their invaluable work during the Pontifical Visit of His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, to San Francisco.

In his closing remarks, the Prelate commended the members of the Executive Council who were in attendance both for Holy Mass and also the reception. He expressed thanks and wished success to the Pastor, Board of Trustees, and Delegates in all of their endeavors. He then announced that during Holy Week, the parish community will be blessed with the presence of H.E. Archbishop Suren Kataroyan, former Prelate of the Diocese of Aleppo, and urged everyone to attend Holy Week services. The Prelate also praised Mr. Henry Khatchadourian, who on this special occasion donated \$25,000 to the Prelacy Building. Accordingly, he read the Pontifical Encyclical addressed to Mr. H. Khatchadourian in which the Catholicos honored his long time service to the church, community, and school with the insignia of "Prince of Cilicia". Let us remember that during His Pontifical Visit His Holiness personally presented Mr. Khatchadourian with the aforementioned medal. Mr. Khatchadourian expressed his thanks for the honor.

The reception came to a close with the recitation of "Bahbanich" prayer and the singing of "Cilicia".